դրապօլցի Հայազգիք սիրոյ և համաձայնութեան կենսագործ տարրը ի գործ դնելով այս օրիորդական նորաբաց դպրոցի բարելաւութեան համար հոգան և լցուցանեն այն բոլոր հարկաւոր պայմաններն, առանց որոնց մի գործնական օգուտ չի յուսացուիր դպրոցներից. այն ժամանակը անշուշտ յառաջադէմ և բաղդաւոր ընթացք կունենայ դպրոցը և կը ծնանի մեր ապագայ սերնդոց համար բարեկիրթ և ուսեալ մայրեր, որով ապագայի համար կպատրաստուի այնպիսի՛ մի երջանկութիւն՝ զոր վայելելու բաղդն ի վաղուց յաջողած են ունենալ կրթութեան հետամուտ ազգերը, որով և իրաւի երջանիկ են հանդիսացել նոքա այժմ։ Մեծայոյս եմ, թէ այս յօդուածի Հայասէր ընթերցողք ուրախութեամբ հոգոյ շնորհաւորելով ինձ հետ այս օրիորդական Հայոց—Հոգևոր Ղահրամանեան—Դպրոցի բացումն՝ կըցանեն նորան յարատևութիւն և յառաջադիմութիւն, և միանգամայն կըարեմաղթեն Աստուծոյ հանգիստ հոգոյ Արղութեանց անմահանուն ազգասէր իշխանին, որոյ սոյն բարեգործութեան յիշատակը անջնջելի արձան հանդիսացոյց թէ՛ իւր մեծանուն բարեպաշտ տոհմի և թէ՛ Հայ ազգութեան պարծանաց համար։

Յովհաննէս Մ—ղեղեանց։

Ի 4-ն Փեբրվարի 1871 —դ
Յաղէքսանդրապոլ

(Հետևեալ նամակը մեզ անյայտ պատճառաւ ուշ հասած է։ Խմբագրութեան։)

Ս. ՓՐԿՉԱՎԱՆԻՑ Ի ԽՐԻՄ,

Խմբագրոն-Ընկեր Արարատ ամսագրոյ.

Մեր երջանիկ Նախահարց քրիստոնէական ջերմեռանդ հոգոյն նուիրական նշխարներէն մէկն է նաև Սուրբ Փրկչավանից տաճարն՝ Խրիմ Թերակղզոյս մէջ, որ Խարասուբազար քաղաքէն գրեթէ 12 վերստի չափ հեռաւորութեամբ մեծ ուխտատեղի է։ Այս տարի նորա երրորդ ուխտին՝ որ կկատարուի անխափան Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին յառաջիկայ կիւրակին, փառաւոր հանդէս կատարուեցաւ ուրախութեան՝ մեր Խարասուբազար քաղաքի ժողովրդոց կողմանէ, ի պատիւ և ի լուսն ինամեայ հաւատարիմ և արդիւնաւէտ Երեցփոխանական ծառայութեան նոյն Սուրբ Փրկչավանից՝ Մեծարգոյ Երեցփոխանին Աղայ Յովսեփայ Պարոնեան։ Սոյն հանդէսն առաւել ևս պայծառացաւ քանի մի երիտասարդաց ազգասիրական եռանդեամբը, մանաւանդ Մեծապատիւ Աղայ Խաչուկ Եաղճիանի՝ որ միշտ նշանաւոր է ճանաչուած քաղաքիս ժողովրդոց մէջ իւր ազգասիրական և բարեպաշտական սրտեռանդն բարեմասնութիւններովն ու զգացմամբքը։ Նոյն հանդէսն սկսեց կատարուիլ առաջի օրուան գիշերային ժամերգութենէն յետոյ Սուրբ Փրկչավանքի լայնատարած բակին մէջ զանազան զուարճալի հրախաղութեամբք և մերձակայ լերանց գագաթներուն և կողքերուն վերայ բազմաթիւ հրավառութեամբք, որուն՝ նոյն գիշերուան օդին պարզութիւնն ու խաղաղութիւնը՝ աւելի գեղեցիկ փայլ մը տալով՝ մեծ զուարճութիւն կուտար ոչ միայն բարեպաշտ ուխտաւորաց սրտից, այլ նաև շրջակայ գիւղօրէից այլազգաւան ազգաց. որք տեսանելով գիշերային այն փառահեղ լուսաւորութիւնները խուռն բազմութեամբ կդիմէին։ Միւս օրն Սուրբ պատարագի աւարտելէն յետոյ մատաղատան մէջ ժողովրդոց կողմանէ կարդացուեցաւ ճառ շնորհակալութեան նոյն Երեցփոխանին՝ Խարասուբազարի ժողովրդոց և ուխտաւորաց կողմանէ. յետոյ ճաշէն արձակուելով բակէն դուրս հրապարակին մէջ սկսան դարձեալ զուարճանալ զանազան երաժշտական նուագարաններով, երգեցողութիւններով և ըմբշամարտութիւններով՝ գրեթէ բոլոր օրը։ Եւ ահա նոյն կարդացուած ճառն ուղարկելով այսու ինդրաձանոյց նամակով՝ ինդրեմ Խմբագրութենէդ, որ բարեհաճի տեղի տալ իւր պատուական Արարատ ամսագրոյն էջերուն մէջ ի քաջալերութիւն բարերարաց Աղգիս և յօրինակ այլոց, թէ գիտէ մեր Ազգն ևս ըստ արժանւոյն գնահատել և պատուել իւր բարերար և արժանաւոր անդամները։

Գ—էն Ա—ագ Յահանայ Շահվերդեանց
Գ—ոյծ Արարատ ամսագ.

9 Դեկտեմբերի 1870 —դ.
Ի Խարասուբազար Տաւրիկեան Նահանգի։